ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԵՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արմավիրի մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշներն Արմավիրի մարզում, %

Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արմավիրի մարզում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ դիտվել է ցուցանիշների նվազում: 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 1%-ով և կազմել է 93,3%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 0,5%-ով ՝ կազմելով 94,9%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 1%-ով՝ կազմելով 97,1%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Տարոնիկ ԲԱ» ՀՈԱԿ-ում (50%), «Գրիբոյեդով ԲԱ» ՀՈԱԿ-ում(78,3%) և «Առատաշեն ԲԱ» ՀՈԱԿ-ում (80,8%) (Աղյուսակ 2):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է

ցուցանիշների որոշակի իջեցում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,3%-ով և կազմել 93,3%, 2 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,5%-ով և կազմել 94,9%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Արմավիրի մարզում՝ 42,6%:

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



Գծապատկեր 2՝ 2019թ. Արմավիրի մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի